ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

2020-2022
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

1© ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթի ոլորտում ՀՀ կառավարության կողմից մշակվող և իրականացվող ծրագրերը պայմանավորված են ՀՀ սահմանադրությամբ ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: ՀՀ Վայոց ձորի մարզի մշակույթի ոլորում իրականացվող ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բարձրացնելու մշակույթի դերը,պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը,ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը:

Մշակույթի ոլորտի ծրագրերը մարզում իրականացվում են 2 թանգարանների՝<<Գլաձորի համասարան>> պատմամշակութային արգելոց – թանգարան/ մշակույթի նախարարության ենթակայության/ և Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի՝ /Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության/, 2 գերատեսչական ենթակայության պատկերասրահների /Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում/, մարզպետարանի ենթակայության մշակույթի տան,Եղեգնաձորի երաժշտական դպրոցի,Երկրագիտական թանգարանի ինչպես նաև համայնքային ենթակայության մշակութային կազմակերպությունների,գեղարվեստի դպրոցների, մանկական ստեղծագործական կենտրոնների, մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական խմբերի կողմից:

Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված է 1373 հուշարձան՝ 340 պահպանական միավորով, որից 1202-ը պետական սեփականություն համարվող:

Մարզի 14 համայնքներում գործում են շուրջ 20 պարային համույթներ, որոնք ապահովված են պարային հագուստներով և իրենց ելույթներով հանդես են գալիս մարզի համայնքներում և հանրապետությունում կազմակերպվող փառատոններին:

Մարզում մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա արդյունավետության բարձրացումը:

Մշակույթի ոլորտում 2018 թ. ընթացքում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հոբելյանական միջոցառումների արժևորման, հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման հետ:

Վայոց ձորի մարզում մշակութային կազմակերպությունները գործում են լիազորված պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ : Մշակույթի զարգացման խնդիրները ներառված են մի շարք ծրագրերում, մասնավորապես՝ <<Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ>> 08.02.02.02,<< Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում >> և <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրերում, որոնք իրականացվում են հիմնականում մարզպետարանի ենթակայության <<Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>>, <<Եղեգնաձորի մշակույթի տուն>>,և <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց >> ՊՈԱԿ-ների միջոցով:

Մարզպետարանի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների նկարագրությունն ամփոփվում է աղյուսակ N1-ում

Աղյուսակ 1

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը[1]
1.	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	Մարզի բնակչություն	50-60 տոկոս
2.	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Մարզի բնակչություն	40 տոկոս
3	Մշակութային միջոցառումների իրականացում	Մարզի բնակչություն	60 տոկոս

1.2 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ.

Վայոց ձորի մարզում գործում են 1 երաժշտական, 4 արվեստի, 2 գեղարվեստի դպրոց, որտեղ գեղարվեստական կրթություն են ստանում 480 երեխա:

2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված <<Մշակութային կրթության աջակցման հիմնադրամ>>-ը, 2017-2018թթ մարզի բոլոր դպրոցներում պարբերաբար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ, վարպետաց դասեր, հանդիպումներ անվանի երաժշտագետների, ինչպես նաև հոգեբանների հետ, որոնց շրջանակներում ուսումնամեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտներին և դասատուներին:

Կառավարության կողմից . երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով իրականացվում է ուսման վարձավճարի փոխհատուցում. այս ծրագրով մարզի 5 երաժշտական և արվեստի դպրոցներ անվճար ուսման հնարավորություն են ստացել 85 երեխա , որն էլ մեծապես նպաստում է ազգային, ինչպես նաև լարային նվագարանների պահպանմանը, խթանում է դրանց տարածումն ու զարգացումը:

1.3 .Գրադարաններ. Մարզում գործում է 1 մարզային / գերատեսչական պատկանելության/, 2 քաղաքային և 35 գյուղական գրադարաններ: Մարզային գրադարանը 2011թ վերանորոգումից հետո վերազինվել է տեխնիկապես՝ գործում է օդափոխման, ջեռուցման և անվտանգության համակարգը, ինչը ստեղծել է նորմալ պայմաններ գրադարանային ֆոնդի պահպանման և աշխատողների համար:

Ընդհանուր գրական ֆոնդը կազմում է 398920 կտոր գրականություն, աշխատողների թիվը՝ 54 մարդ (աղյուսակ 2) Գրադարաններում մարզպետարանի նախաձեռնությամբ և աջակցությամբ կազմակերպվել են շուրջ 66 բազմաբնույթ և բազմաբովանդակ միջոցառումներ, որոնցից 20-ը՝ մանկական՝ գրքային շնորհանդեսներ, մեծարման ու գրական ցերեկույթներ, գրքերի մատենագիտական տեսություններ ու շնորհանդեսներ, գրական ու պոեզիայի երեկոներ, հանդիպումներ գրողների, բանաստեղծների, գիտնականների, արվեստի, գրականության, կրթության ու մշակույթի անվանի գործիչների հետ:

1.3 Գրադարանային համակարգ

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	**Գրադարանների թիվը**	**Գրական ֆոնդը /միավոր/**	**Աշխատողների թիվը**
Եղեգնաձորի քաղ. գրադարան	1	9465	12
Եղեգնաձորի տարածաշրջան	23	212688	23
Վայքի տարածաշրջան	12	123569	15
Ջերմուկի տարածաշրջան	2	53198	4
Ընդամենը	38	398920	54

Այս ոլորտի հիմնական գործառույթներն են՝ բնակչությանը մատուցվող գրադարանային –տեղեկատվական սպասարկման ծառայությունը, գրադարանային ֆոնդի համալրումն ու օգտագործման մատչելիության ապահովումը, ինչպես նաև գրադարանային հավաքածուների պահպանությունը: Մարզում գործող գրադարանների գրքային ֆոնդը հնամաշ է և կարիք ունի համալրման:
Մարզի համայնքային գրադարանները գտնվում են անբարեկարգ շենքային պայմաններում: Շենքերի վերանորոգման ,ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար ակնկալվում է ՀՀ պետական բյուջեից համապատասխան հատկացումներ:

1.4 **Թանգարաններ**. Մարզի տարածքում գործում են երկու թանգարաններ,Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, <<Գլաձորի համալսարան>> պատմա-մշակութային արգելոց թանգարանը:
<<Գլաձորի համալսարան>> պատմամշակութային արգելոց թանգարանը հիմնադրման օրվանից ջեռուցում չի ունեցել, ինչը նպաստում է շենքի ներսում խոնավության ավելացմանը, իսկ ձմռան ամիսներին գրեթե անհնար է դարձնում աշխատելը:
Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 1968թ: Լրացել է նրա հիմնադրման 50 տարին: Ֆոնդերում պահպանվում են մարզի վերաբերյալ պատմամշակութային վաղ հնագիտական, միջնադարյան, ազգագրական բազմաբնույթ ցուցանմուշներ, մի շարք եզակի նմուշներ: Գրանցված են 8500 ից ավել նմուշներ:Շարունակվում են ֆոնդային ցուցանմուշների անձնագրերի թվայնացման և տվյալների վերամշակման աշխատանքները: Թվայնացվել է գրանցված ցուցանմուշների շուրջ 30 տոկոսը:
Հանրապետությունում նմանատիպ թանգարանների շարքում լինելով լավագույններից մեկը, 2018 թվականին լուծվեց թանգարանի մշտական ցուցադրության հարցը,և այժմ ցուցադրության է հանվել մինչ այժմ նկուղում պահվող ցուցանմուշները. Որի հետևանքով ավելացել է թանգարանի այցելուների թիվը: 2010թ շենքը հիմնանորոգվել և լուծվել է ջեռուցման հարցը: Այժմ առաջնահերթ խնդիրներից է էլեկտրոնային

տեղեկատվական շտեմարանի ներդրման ավարտումը, որը նախատեսված է ՀՀ կառավարության 11 սեպտեմբերի 2014թ թիվ 1058-Ն որոշումով:
Էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ներդրման գործընթացը ավարտելու համար անհրաժեշտ գումարը կազմում է 835.0 հազ դրամ, որը ներկայացված է հաշվարկ 8-ում: 2018թ 415.0 հազ դրամ մնացորդը նպատակաուղղվել է այդ նպատակի համար, իսկ մնացած գումարը նախատեսվել է 2020--2022թթ ՄԺԾԾ հայտով /հաշվարկ 8/:

1.5 **Մշակույթի տներ**. Պետական մշակութային քաղաքականության իրականացման հիմնական օղակը մշակույթի տներն են, որոնք կոչված են պահպանելու և սերունդներին փոխանցելու հայ մշակույթը, նրա արժեքներն ու ավանդույթները: Սա հենց պետական մշակութային քաղաքականության իմաստն է, և պետք է դիտվի որպես աշխատանքները կազմակերպելու կարևորագույն ու հիմնական սկզբունք: Մարզում կան մասնագետ կադրերի, մշակույթի օջախների վերանորոգման և տեխնիկական վերազինման խնդիրներ: Գրեթե բոլոր մշակույթի տները ձմեռային սեզոնին շուրջ 4—5 ամիս չեն գործում, քանի որ ունեն ջեռուցման խնդիր: Միակ ջեռուցվող մշակույթի տունը ,,Մարզային մշակույթի տունն էր, որը 2008թվականին <<Ղ-տելեկոմ>>կազմակերպության բարեգործությամբ /111440.0հազ.դրամ/ մասնակի վերանորոգվելուց հետո ջեռուցվել է ՀՀ պետական բյուջեից հատկացված 2000. 0 հազ դրամ գումարի շրջանակներում: Սակայն 2013 թվականից պետական բյուջեով Եղեգնաձորի մշակույթի տանը << վառելիք և ջեռուցում >> հոդվածով գումար չի նախատեսվում, իսկ սեփական եկամուտները բավարար չեն ջեռուցումը կազմակերպելու համար: Ջեռուցման կազմակերպման Եղեգնաձորի մշակույթի տան բնականոն գործունեությունը անխափան ապահովելու համար անհրաժեշտ է 3458.3 հազ դրամ գումար, որից 2927.5 հազ. Դրամը ակնկալվում է ՀՀ Պետական բյուջեից, որը ներառված է 2020-2022թթ ՄԺԾԾ հայտի մեջ/ հաշվարկը կցվում է:
Չնայած վերը նշված դժվարություններին մարզի մշակութային կյանքը հագեցած է: Մարզային փառատոններին, կամ ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին մարզի համայնքներում գործող ինքնագործ խմբերը՝ հիմնականում մանկական պարային, ասմունքի, թատերական, ժողովրդական գործիքների, և անհատ կատարողները ունենում են ակտիվ մասնակցություն: Մարզում կազմակերպվող գրեթե բոլոր մարզային միջոցառումների գեղարվեստական մասը կազմակերպվում է մարզի մշակույթի տներում գործող ինքնագործ համույթների ուժերով:

1.6 **Մշակութային միջոցառումներ**. Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային միջոցառումները, որոնց կազմակերպման ուղղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է աշխուժացնել մարզերում և համայնքներում մշակութային կյանքը, խթանել մշակութային փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի մշակութային կազմակերպությունների միջև: Մշակույթի ոլորտում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հոբելյանական միջոցառումների արժևորման, հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման հետ:
ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2018թ իրականացվել են <<Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված միջոցառում>>

<<Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում>>, <<ՈՒսուցչի օրվան նվիրված միջոցառում>>, <<Բերքի տոն», <<Մանկական թատերական փառատոն>>, <<Ժողովրդական արվեստ> մանկապատանեական երաժշտական փառատոն, <<Վայոց ձորի գեղանկարիչները> ցուցահանդես և այլ մշակութային միջոցառումներ:

Նշված մշակութային միջոցառումները ավանդույթի ուժ ունեն և շարունակական են:

2018թ.-ին նախատեսվել է անցկացնել 11 մարզային մշակութային միջոցառում, որի համար պետական բյուջեով հատկացված էր 4.461.3 հազ.դրամ, ինչպես նաև նախատեսվում են կազմակերպել պետական բյուջեով չֆինանսավորվող տարաբնույթ մշակութային միջոցառումներ:2019թ մշակութային միջոցառումների գումարը նախատեսվել է 5353.56 հազ.դրամ:

2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մշակույթի առանձին ենթաոլորտներում առկա հիմնական խնդիրներն

2.1 Վայոց ձորի մարզում մշակութային ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակույթի տների, գրադարանների, թանգարանների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, պատմամշակութային հուշարձանների, ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ, ինչպես նաև առկա է մասնագետ կադրերի սակավության և վերապատրաստման խնդիրները:

2.2 Թանգարաններ

Այժմ առաջնահերթ խնդիր է էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման ներդրման ավարտումը , որը նախատեսված է ՀՀ կառավարության 11 սեպտեմբերի 2014թ թիվ 1058-Ն որոշումով: Էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ներդրման գործընթացը ավարտելու համար անհրաժեշտ 1215.0 հազ դրամից 2018թ գործունեությունից առաջացած դրամական մնացորդը՝ 415.0հազ. դրամ գումարը 2019թ ամբողջությամբ ուղղվելու է էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ներդրմանը, իսկ մնացած հազ դրամ գումարը նախատեսվել է 2020-2022թթ ՄԺԾԾ հայտով, որի համար /հաշվարկը ներկայացվել է հավելված N 8-ով:

2.3 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ: Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների հիմնախնդիրներն են.

1.Գեղարվեստական կրթական հաստատությունների մեծ մասը գույքի համալրման, գործիքների ձեռքբերման կարիք ունեն:

Ուսուցիչների ցածր աշխատավարձի հետևանքով մեծ է դպրոցներից որակյալ կադրերի արտահոսքը; Ելնելով սոցիալական իրավիճակից սահմանվում են ցածր ուսման վարձավճարներ, ինչը չի ապահովում դպրոցի պահպանման անհրաժեշտ ծախսերը, իսկ առանձին դեպքերում, սահմանված բարձր վարձավճարը բերում է սովորողների թվաքանակի նվազեցման:

2.4 .Գրադարաններ. Մարզի գրադարանների հիմնախնդիրներն են.

1. Բացի նախարարության ենթակայության Եղեգնաձորի քաղաքային գրադարանից,որտեղ ստեղծված են բոլոր պայմանները /վերանորոգված է, առկա է համակարգչային համակարգը, ունի ինտերնետ կապ,ջեռուցվում է/,մնացած գրադարաններին անհրաժեշտ է ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով, այն կնպաստի աշխատանքների որակի բարձրացմանը և բնակչության տեղեկատվական դաշտի ընդլայնմանը:

2. Անհրաժեշտ է գրադարանները համալրել նոր գրականությամբ:
3.Հարկավոր է իրականացնել աշխատանքներ տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով. այդ համատեքստում առաջնահերթ է մնում գրադարաններից օգտվողների ընթերցողական պահանջարկի բավարարմանն ուղղված գրադարանային հավաքածուների համալրման և պարբերական մամուլի բաժանորդագրության խնդիրները, <<Ինտերնետ>> կայուն կապի առկայությունը, երաժշտական սրահների, ընթերցանության համար հարմարավետ պայմանների ստեղծումը:
4. Գրադարանային գործի արդիականացումը պահանջում է ժամանակի պահանջներին համապատասխան՝ նոր հմտությունների տիրապետում, ունակությունների ձեռք բերում, որն էլ ենթադրում է գրադարանային կադրերի վերապատրաստում:
5. Մարզում տուրիզմի զարգացմանն ու գովազդային, նշանավոր մարդկանց ու հայրենագիտական աշխատանքների կազմակերպման առթիվ անհրաժեշտ է ստեղծել պայմաններ (հիմնականում ֆինանսական) հրատարակչական գործունեություն ծավալելու համար:

3. 2020-2022 թթ. մշակույթի ոլորտի զարգացման ծրագրի իրագործմանն ուղղված միջոցառումներ:

3.1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐ

3..1 Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցում.
Պետության կողմից իրականացվող ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագիրը խթանեց համայնքներում գործող արվեստի և երաժշտական դպրոցներում ազգային նվագարանների պահպանմանը, տարածմանն ու զարգացմանը: Այս ծրագրով մարզի 5 երաժշտական և արվեստի դպրոցների, 85 աշակերտ անվճար ուսման հնարավորություն է ստացել: ՈՒսման վարձավճարի փոխհատուցումը տվյալ համայնքներում, նպաստել է ազգային, լարային և փողային նվագարանների պահպանմանը, տարածմանն ու զարգացմանը:
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային ,փողայինև լարային նվագարանների գծով ուսուցում կազմակերպելու համար 2018թ տրվել է 20303.7հազ դրամ, 2019թ համար նախատեսվել է 20303.7 հազ.դրամ:

3.2 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային միջոցառումները, որոնց կազմակերպման ողղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը, երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հայտնաբերումն ու խրախուսումը, մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների

հանրահռչակումը, միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը, համայնքներում մշակութային կյանքի աշխուժացումը:
Մարզում նշվում են բոլոր պետական, ազգային և ծիսական տոները:
2019թ. մշակութային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից հատկացվել 5353.56 հազ դրամ :
.....

<<ՆԱԽԱԳԻԾ>>

3.3 2020-2022թթ <<ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ>> ԾՐԱԳԻՐ

2020	1.Հայրենասիրական երգերի և պարարվեստի փառատոն	մայիս	500.0	ՀՀ պետ. բյուջե
փառատոններ	2Համամայնքների մշակութային փառատոն	նոյեմբեր	600.0	ՀՀ պետ. բյուջե
	3.Մեծ եղեռնի 105 ամյակին նվիրված մասսայական միջոցառում	Ապրիլ	400.0	ՀՀ պետ. բյուջե
	4.<<Ոսկե աշուն>> Ուսանողական փառատոն	հոկտեմբեր	700.0	ՀՀ պետ. Բյուջե
տոնախմբություններ	5.Հայրենական մեծ պատերազմի 75 ամյակին նվիրված միջոցառում	մայիս	661.3	ՀՀ պետ. բյուջե
	6.Տարեմուտի հանդես	դեկտեմբեր	400.0	ՀՀ պետ. բյուջե
	7<<Քաղաքացու օր>> տոնական միջոցառում	Ապրիլ	800,0	ՀՀ պետ. բյուջե
	8.ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառում	սեպտեմբեր	400.0	ՀՀ պետ. բյուջե
	Ընդամենը(առանց ԱԱՀ)		***4.461.3դր.***	
	ԱԱՀ		***892.26դր***	
	Ընդամենը		***5353.56 դր***	

2021թ

	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Գումարը՝ /հազ. դրամ/	ֆինանսավորման աղբյուրը
	1.<<Երազ իմ երկիր >> երգի	Օգոստոս	500.0	ՀՀ պետ. բյուջե

	փառատոն			
	2 Երաժշտական և արվեստի դպրոցների մարզային փառատոն	հունիս	500. 0	ՀՀ պետ. բյուջե
	3<<Կոմիտասյան օրեր>>	սեպտեմբեր	300.0	ՀՀ պետ.բյուջե
	4.<<Ժողովրդական արվեստ>> մանկապատանեկան երաժշտական փառատոն<<Մշակույթի ոլորտի շնորհալիները>>	նոյեմբեր	600.0	ՀՀ պետ. բյուջե
	5.Տարեմուտի հանդես	դեկտեմբեր	400.0	ՀՀ պետ. բյուջե
	6.Ուսուցչի օր	հոկտեմբեր	350.0	ՀՀ պետ. բյուջե
	7.Հայրենական Մեծ պատերազմի 75-ամյակին նվիրված միջոցառում	մայիս	400.0	ՀՀ պետ. բյուջե
	8. Բերքի տոն	հոկտեմբեր	750.0	ՀՀ պետ. բյուջե
	9.ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառում	սեպտեմբեր	400.0	ՀՀ պետ. բյուջե
	10.Մեծ եղեռնի 105 ամյակին նվիրված, մասսայական միջոցառում	Ապրիլ	300.0	ՀՀ պետ. բյուջե
	Ընդամենը(առանց ԱԱՀ)		***4500.0 դր***	
	ԱԱՀ		***900.0դր***	
	Ընդամենը		***5400.0դր***	
2022				
	1./Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման 103-ամյակին նվիրված մասսայական միջոցառում	մայիսի-28	420.0	ՀՀ պետ. բյուջե
	2.Տյառն ընդառաջ	փետրվար	318.5	ՀՀ պետ. բյուջե
	3.Հայրենասիրական երգերի և ազգագրական պարերի փառատոն	մայիս	520.0	ՀՀ պետ. բյուջե
	4.ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառում	սեպտեմբեր	530.0	ՀՀ պետ. բյուջե
	5.<<Երեխաների պաշտպանության օրվան նվիրված >> մասսայական	հունիս	450.0	ՀՀ պետ. բյուջե

	միջոցառում			
	6.Ուսուցչի օր	հոկտեմբեր	450.0	ՀՀ պետ. բյուջե
	7.Բերքի տոն	հոկտեմբեր	650.0	ՀՀ պետ. բյուջե
	8.Տարեմուտի երեկո	դեկտեմբեր	400.0	ՀՀ պետ. բյուջե
	9.Մարզի նկարիչների ցուցահանդես <<Վայոց ձորյան գույները>> խորագրով	դեկտեմբեր	350.0	ՀՀ պետ. բյուջե
	10.<<Մենք ենք մեր համայնքները>>մշակութային փառատոն	նոյեմբեր	550.0	ՀՀ պետ. բյուջե
	Ընդամենը(առանց ԱԱՀ)		***4638.5դր***	
	ԱԱՀ		***927.7դր***	
	Ընդամենը		***5566.2դր***	

2018թ ցուցանիշով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով ՀՀ պետական բյուջեից հատկացված 4..461.3 հազ դրամ գումարը նախատեսված է եղել թվով 10 միջոցառում անցկացնելու համար: 2019թ նախատեսվել է 5353.6 հազ. Դրամ թվով 13 միջոցառման համար: 2019թ ՄԺԾԾ հայտով ներկայացվում է , 2020թվականին 5353.6 հազ դրամ , 2021թվականին 5400.0 հազ դրամ 2022թվականին 5566.2հազ.դրամ գումար:

4. ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2017թ ՀՀ պետական բյուջեով նախատեսված է եղել Եղեգնաձորի <<Երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ին պահպանման ծախսեր՝ 14945.6 հազ դրամ, Եղեգնաձորի <<Մշակույթի տուն>> ՊՈԱԿ-ին 2318.6 հազ դրամ, <<Մշակութային միջոցառումներ >> ծրագրով՝ 4938.5 հազ դրամ: 2018թ համար համապատասխանաբար՝<<Երկրագիտական թանգարան >>ՊՈԱԿ-ին պահպանման ծախսեր՝ 13962.8 հազ դրամ, Եղեգնաձորի <<Մշակույթի տուն>> ՊՈԱԿ-ին 2318.6 <<Մշակութային միջոցառումներ >> ծրագրով՝ 4461.3 հազ դրամ:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մշակույթի ոլորտի 2020-2022թթ. միջնաժամկետ ծրագիրը միտված է ապահովելու մշակույթի տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը.

5.1.1 Թանգարաններ

2020- 2022թթ. ոլորտի առաջնահերթ նպատակներն են

ա/ Թանգարանային ֆոնդի համալրումը և պահպանումը, ցուցահանդեսների կազմերպումն ու անցկացումը:
բ/ Թանգարանային հավաքածուների հանրամատչելիության ապահովումը:
գ/ Թվայնացումների հետ կապված՝ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ներդնումը:

5.1.2 Մշակութային միջոցառումներ

2020-2022 թթ. մշակութային միջոցառումների իրականացման առաջնահերթ նպատակներն են.
ա/ Հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը:
բ/ Երիտասարդ ստեղծագործողների և կատարողների խրախուսումը:
գ/ Մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հանրահռչակումը
դ/ Միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը:
ե/ Տաղանդավոր երիտասարդների հայտնաբերումն ու խրախուսումը:
զ/ Միջմարզային մշակութային համագործակցության ապահովումը:
է/ Պետական տոների նշումը:
ը/ Ազգային ծեսերի և ավանդույթների պահպանումը, տարածումն ու զարգացումը:

5.2 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վայոց ձորի մարզի մշակույթի ոլորտի զարգացման քաղաքականության հիմնական գերակայություններն են.
ա/ Մշակութային ժառունգության պահպանություն:
բ/ Մշակութային արժեքների տարածում :
գ/ Հասարակական ստեղծագործական ներուժի օգտագործում:
դ/ Մշակութային զարգացման տնտեսական ապահովում:
ե/ Կադրերի վերապատրաստում և վերարտակավորում:

h/h	**Գերակա ուղղություն**			**Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին**
	2020	**2021**	**2022**	

1	Պետական մշակութային քաղաքականության իրականացում, մշակութային, հոգևոր կյանքի աշխուժացում. մշակութային միջոցառումների խթանում և զարգացում:	ՀՀ կառավարության 14 հունիսի 2012թ թիվ 740 -Ն որոշումը <<Պետական միջնաժամկետ ծրագիրը հաստատելու մասին>>

6.. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը

6.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը

Մարզում գործում են մշակութային ոլորտի երեք ծրագրեր՝

1 Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ՝ 08.02.02.02 ծրագիրը իրականացվում է 'Եղեգնաձորի երկրագիտական թանգարան ' ՊՈԱԿ-ի միջոցով:

2.Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում՝ 08.02.03.01 ծրագրի պատասխանատուն 'Մշակույթի կենտրոն' ՊՈԱԿ-ն է:

3. Մշակութային միջոցառումների իրականացում 08.02.05.04 ծրագիրը իրականացվում է << Եղեգնաձորի երկրագիտական թանգարան.>>,<<Եղեգնաձորի մշակույթի կենտրոն>>, և<< Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ների միջոցով:

4.Ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցում 09.05.01.05 ծրագիրը իրականացվում է << Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ի,Ջերմուկի թիվ 1 արվեստի դպրոց, Ջերմուկի թիվ 2 արվեստի դպրոց,Վայքի Խաչատուր Ներսիսյանի արվեստի դպրոց,Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ների միջոցով:

Այդ ծրագրերի գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերը ներկայացվում է ՄԺԾԾ հայտի թիվ 1 աղյուսակում :

ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա փոփոխությունը նախորդ մակարդակի նկատմամբ ներկայացվում է կից հաշվարկներով:

<u>Աղյուսակ 3.</u> Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2020-2022թթ ծախսերի կանխատեսում (ամփոփ)

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերն իրականացնող պետական մարմինների անվանումը	Ծրագրերի ցանկը (անվանումը)	2019թ. բյուջե[2]	Կանխատեսում		
						2020թ	2021թ	2022թ

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերն իրականացնող պետական մարմինների անվանումը	Ծրագրերի ցանկը (անվանումը)	2019թ. բյուջե[2]	Կանխատեսում		
						2020թ	2021թ	2022թ
			Վայոց ձորի մարզպետարան					
				Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր	45194.96	48653.26	48699.7	48865.9
08	02	02	Եղեգնաձորի Երկրագիտական թանգարան	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	16755.4	16755.4	16755.4	16755.4
08	02	03	Եղեգնաձորի մշակույթի տուն	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	2782.3	6240.6	6240.6	6240.6
08	04	05	Եղեգնաձորի Երկրագիտական թանգարան Եղեգնաձորի մշակույթի տուն Եղեգնաձորի երաժշտական դպրոց	Մշակութային միջոցառումների իրականացում	5353.56	5353.56	5400.0	5566.2

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերն իրականացնող պետական մարմինների անվանումը	Ծրագրերի ցանկը (անվանումը)	2019թ. բյուջե[2]	Կանխատեսում		
						2020թ	2021թ	2022թ
09	05	01	<< Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ի,Ջերմուկի թիվ 1 արվեստի դպրոց, Ջերմուկի թիվ 2 արվեստի դպրոց,Վայքի Խաչատուր Ներսիսյանի արվեստի դպրոց,Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ներ	Ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	20303.7	20303.7	20303.7	20303.7

Գոյություն ունեցող ծրագրերի գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսեր է նախատեսնվում՝ 2019թվականի համար 45194.96 հազ դրամ, 2020թ նախատեսվում է 48653.26 հազ դրամ, աճը 2019թ-ի նկատմամբ կազմում է 3458.3 հազ դրամ, որը պայմանավորված է Եղեգնաձորի Մշակույթի տան լոկալ ջեռուցման.մշակութային միջոցառման ծախսերի ավելացման և Երկրագիտական թանգարանում էլ. շտեմարանի ներդրման հետ:

Մշակույթի ոլորտի համար նախատեսվող ջեռուցման գումարի ավելացումը կնպաստի մարզի մշակութային կյանքի աշխուժացմանը, նոր ծրագրերի իրականացմանը, մշակութային ժառանգության պահպանմանն ու տարածմանը, քանի որ ջեռուցման բացակայությունը ամբողջովին խաթարում է մշակույթի տան բնականոն գործունեությունը:

Թանգարանային ոլորտի կարևորագույն ուղղություններից է նոր ցուցադրումների և եղած ցուցահանդեսների կազմակերպումը, ֆոնդերի, ցուցանմուշների տեսականու ու քանակի ավելացումը, որը կնպաստի մշակութային ժառանգության պահպանությանը, հանրության հետ տարվող աշխատանքերի զարգացմանը, մշակութային արժեքների տարածմանը:

Մշակութային միջոցառումների համար նախատեսված ֆինանսական միջոցները կխթանեն մրցույթ-փառատոնների ժանրերի ավելացմանը, կնպաստեն մշակութային միջոցառումների առաջնահերթ նպատակների իրականացմանը:
Այս ոլորտում, պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ, ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև սեփական եկամուտները, որը գոյանում է հիմնականում վճարովի ծառայության մատուցումից:

<u>Աղյուսակ4. Ոլորտի պետական հատվածի 2019-2021թթ. ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի կտրվածքով</u>

(հազար դրամներով)

Բաժին/խումբ/դաս	Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները	Փաստացի ըստ 2018թվականի տարեկան հաշվետվության	2019թվականի սպասողական	Կանխատեսում		
				2020թ.	2021թ.	2022թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	2464.0	3000.0	3000.0	3000.0	3000.0
	այդ թվում՝					
08.02.03.01	1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից	2464.0	3000.0	3000.0	3000.0	3000.0
	2. Ստացվող նվիրատվություններից*	0	0	0	0	0

6.2 Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

ՄԺԾԾ ժամանակահատվածում այս ոլորտում նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր չեն նախախատեսվում :